

Կ'ԸՍԷ Լ. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏ ՄԸ ՈՐ ՄԻԱՅՆ ԱՆՆԵՐԵԼԻ ԺԱՄԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԿԸ ՄԱՏՆԷ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՌՄԲԱԿՈՇՈՒԱԾ

Որքան ալ մենք մեզ չուզենք իրաւունք տալ դատելու հայաստանեան հարցերը, հանդիստ նստած ենք արեւմտեան հարցերէն աշխարհի, կարելի չէ սակայն մեր վրդովումը ի տես երեսփոխաններու, որոնք օրերը իրիկուն կ'ընեն աւանդու ճառերով, մինչ անդին ժողովուրդը կը տուայտի զրկանքներու մէջ եւ որու համբերութիւնն ալ հարկ է շատ չջահարձել:

Ուրեմն, Երկուշաբթի, Օգոստոս 17-ին, արտակարգ նիստ կար, Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հրահրով, ի պատասխան ցոյցերու եւ իր հրաժարման պատճառով: Արդ, հետաքրքրական է նաեւ հաստատել որ նիստը դռնփակ էր, բայց կը սփռուէր հեռատեսիլէն:

Ելոյթ ունենալով, Լեւոն Տէր-Պետրոսեան յատարարեց թէ չի հրաժարիր իր օրէնքէն մէջ նախատեսուած պատճառներէն ոչ մէկը կայ (հիւանդութիւն, խախտում Հանրապետութեան օրէնքներու կամ անձնական փափաք քաշուելու): Ինք ընտրուած է ժողովուրդին ձայներու 83%-ով, ուրեմն ոժողովուրդին կարծիքը հարկ է առնել հանրաքուէով: Լեւոն Տէր-Պետրոսեան երեսփոխաններու ուշադրութեան կը յանձնէ որ շրջանցելով Հանրապետութեան նախագահը պաշտօնանի ընելու սահմանադրական ձեւերը, ընդդիմութիւնը կը փորձէ իշխանութեան փոփոխութեան հասնիլ ուժի ճնշում բանեցնելով, ինչ որ պետական յեղաշրջման ձգտում է: Կը շեշտէ որ քաղաքական ընդդիմութեան շարքերը այսօր ալ ուժեր կան որոնց հետ իշխանութիւնները կրնան եւ պէտք է դործակցին, սակայն զուգահեռաբար, ցաւօք, կայ նաեւ մերժողական դիրքերէն հանդէս եկող թեւը, որ հրաժարած է կառուցողական մօտեցում ցուցարեբելէ:

Բայց, զլիսաւոր անհեթեթութիւնը այն է որ ընդդիմութիւնը կը մերժէ Նախագահին իրաւունքը ճանչնալ Խորհրդարանի արտակարգ նիստ հրահրելու տուեալ օրոչ հարցի մը շուրջ: Ըստ իրեն նախագահը միայն կրնայ խնդրել որ քննուի սա կամ նա հարցը: Ամէն պարագայի մէջ քուէարկութեան կը դրուի այն հարցը թէ Նախագահին առաջարկած հարցը կրնա՞յ քննարկուիլ: Բայց, 117 ձայն կը ստանայ միայն (120 է անհրաժեշտ թիւը): Այնուհետեւ ընդդիմութիւնը 93 ստորագրութիւն ժողոված կ'առաջարկէ որ նիստ քննարկէ Հայաստանի իրավիճակը: Այս կէտն ալ կը ստանայ միայն 105 ձայն ու նիստը կը փակուի ոչ մէկ հարց քննելով: Յիշենք որ Պարոյր Հայրիկեանն ալ առաջարկած էր որ քննարկուին սահմանադիր ժողովի ձեւաւորման եւ ընտրութիւններու առընչուող փաստաթուղթերու թղթածրարը, բուրում ըլլալով, այս մէկ հարցը քուէարկութեան խի չէ դրուած: Այս ամբողջը ցոյց կուտայ աններելի ընթացք մը «Ժողովուրդի ներկայացուցիչներու» կողմէ, որոնք իրաւունք պէտք չէ ունենան այսօրու թեթեւութեամբ վարուելու այսօրու ձայն հարցերու հետ:

Ինչ կը նշանակէ «Լեւոն» դաւաճան»,

«Լեւոն» հրաժարում» բացառանքէլ օրն ի բուն, ընդդիմութեան մը կողմէ որ ոչ շինարար ալ ծրարի մը ներկայացնելու ի վիճակի է, ոչ ալ լուրջ հարցի մը շուրջ խորհրդարանական մեծամասնութիւն մը ստեղծելու:

**

Երկուշաբթի դիշեր, Օգոստոս 17-ին, ամբակոծուած է Ստեփանակերտի կեդրոնը: Երկու մեռեալ կայ եւ վեց վիրասուր:

Նախորդ օրն ալ ռազմական դործողութիւնները շարունակուած էին Մարտա-կերտի եւ Մարտունիի շրջանները: Հայկական ինքնապաշտպանական ուժերը ետ մղած են հակառակորդը: Ռումբեր կ'իջնան միշտ Վայցի շրջանի գիւղերը, Տաուշի շրջանի Պառաւաքար գիւղը: Մեղրի ալ կրկին ու կրկին կը ամբակոծուի: Գործողութիւններու ընթացքին ալ հայկական կողմը ունի 2 մեռեալ եւ 7 վիրասուր, բայց, հայ մարտիկները կը ցած են գրաւել բարձունքը, ուրկէ կը ամբակոծուէր Մեղրին: Դիրքերու ամրապնդում կատարուած է Արծուաչէի շրջանը եւ Աղերիներու հինգ հրասայլ փճացած:

**

Ղարաբաղի Պաշտպանութեան Խորհուրդի գլուխն է Ռոպէր Քոչարեան:

**

«Լը Մոնտ» (Օգոստոս 18) կ'անդրադառնար այս խորհուրդի կազմութեան, Քոչարեանը ներկայացնելով իրեն Երեւանի իշխանութեան մօտ մէկը մինչ՝ «վերջին ամիսներուն, հայկական դերազգայնական ընդդիմութեան մօտ հոսանքն էր, զըլիսաւորաբար Դաշնակցութեան, որ կը տիրապետէր այդ շրջանին Խորհրդարանին» կ'աւելցնէ թերթը: Կ'ակնարկուի նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանի դժուարութեանց: Թերթին օրուան խմբագրականն ալ «Կովկասի կաթսան» առաւելաբար նուիրուած ըլլալով հանդերձ Արխաղիոյ, վերջին պարբերութեամբ մը կը խօսի նաեւ հայ -- ազերի բախումներուն մասին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈՒՇ ամէն ինչ կը խոստանայ Ամերիկացիներուն, կը ծաղրէ իր մրցակիցը (որ ինքզինքը արդէն Սպիտակ Տունը կը տեսնէ), կ'ըսէ թէ հարցախոյզերը բնաւ հողը չեն եւ թէ շատ առողջ է: Ծիշդ է որ իր առողջութեան մասին շուկներ կան եւ արդէն յոգնած կը թուի ու «ցոյց կուտայ որ 68 տարեկան է»: Գործը դիւրին չէ սակայն, տնտեսական վիճակը, գործազրկութիւնը, պիւտճէին բացը, տկարացած աճը պատճառ են որ Պուշի մըրցակիցին դիրքը, առ այժմ դոնէ, աւելի հանդիստ ըլլայ: Հանրապետականները բասական պահպանողական ծրարի մը ունին, զլիսաւորաբար վիժումի մասին, զոր կ'ուզեն արդիւնել:

«ՔԻՐՏ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ԱՀԱՐԵԿԻԶ